

շինած է որ եթէ բնակարան մը բուրովին մթընցընես, ու պատուհանի փեղկին վրայ բթաշափ տրամադրով կլոր ծակ մը թողուս, դրսի առարկային վրայէն լուսոյ շառաւիղները ծակէն ներս կը զարնեն, և կը ձեանայ երկու նման կոնոնաձեւ՝ իրենց գաղաթէն իրարու հետ միացած . մէկուն խարիսխն է առարկային մեծութիւնը, մէկալին խարիսխը մութքնակարանին մէջ զարկած պատկերը : Այս շառաւիղներուն դիմացը թէ որ թուղթ բռնես, դրսի առարկային պատկերը հօն երեսութացած կը տեսնես աղօտ կերպով մը, ու գլխիվար դրքով : Դաշիվար երենալուն պատճառ ուրիշ տեղ կը զուրցենք : Խակ թէ որ ծակին բերանը ոսպնաձեւ ապակի մը դրուի, աս պատկերը աւելի պայծառ կը տեսնուի, ու դրսի առարկային գոյներն ալ որոշ : Այս աշխափը իմանալէդ ետքը պիտի գիտնաս որ Ատուերատուն ըսուած գործին ալ ասոր նման է . այսինքն արկղ մըն է չորս գին գոց, և մէջը մութ . միայն ասոր վրայէն ուղղահայեաց խողովակ մը դրած է որ պէտք եղած ատեն իրնայ ներս դուրս մտնելու ելել . և որպէս զի ներս զարկած պատկերը գլխիվար ըըլայ, խողովակին բերնի ոսպնաձեւ ապակին դրսի դին դըրուած կ'ըլլայ պզմիկ հայլի մըն ալ : Աւստի տեսարան մը օրինակելու ատենդ պէտք է հայլին երեսը առարկային դարձնես անկիւնաթար, որ անոր պատկերը նախ հայլին մէջ զարնէ, ու անկէ ցոլանայ ոսպնաձեին վրայ, անկէ ալ ներս զարնէ ուղիղ դըրքով : Դարձիքին գլխաւոր բանը ասէ . ասկէ զատ՝ մնտուկին մէկ դին ալ երկու ծակ կայ չափաւոր մեծութք, ու պզտի վարագոյներով պաշտպանուած է որ ներս լոյս չծագէ . անոր համար են ասոնք որ նկարիչը մէկ ծակէն ներս նայի ու առարկային հեռաւորութեց համեմատ ոսպնաձեին խողովակը վեր վար ընելով՝ դրքին յարմարցընէ, և մէկալ ծա-

կէն ձեռքը ներս խոթէ, ու երեցած պատկերին վրայէն կապարագրով կամ ներկով նկարէ :

Ըստալիէ՝ անունով համբաւաւոր տեսաբանը հնարք մը մտածէց հայլին ու ոսպնաձեին տեղը լեցընելու . այսինքն եռանկիւնի հատուածակողմ մը շինեց, որուն մէկ երեսը գնտական ըլլալով՝ ոսպնաձեի տեղ կը բռնէ, իսկ մեծ երեսը հայլի կը ձեանայ . երբոր դրսի առարկային շառաւիղները հատուածակողմին մէջէն կ'անցնին ու կը զարնեն անոր վրայ, անկէ ալ կ'իջնան՝ գնտական կողմէն կ'ելլեն ու մնտուկին մէջ կը նկարուին :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

• Գ ՅՀԱՆ :

Գ ՅՇՈՒՐԻՆԻՆ երկայնութիւնը սովորաթար իրեք ոտնաշափ կ'ըլլայ . պոչին երկու ծայրը բարակ ու մէջտեղը տասուերկու մատնաշափ հաստ է, տակի կողմը տափակ, վրանքիչ մը ուռած . պոչին վրայ մազի տեղ՝ ձկան պէս թեփ՝ ունի : Ա ըայի մորթը կակուղ, ողորկ ու փայլուն, գոյնն ալ սովորաթար խահվէի գունով . երբեմն սե կ'ըլլայ, երեւմն ալ բոլորովին ձերմակ : Ականջները անանկ կարձ են որ հազիւ կ'երենան . առջեւի ոտուըները կարձ են ու մկան ոտքի կընմանին, ետեւի ոտուըները լայն, ու մատուըները մաշկով իրարու միացած : Ակռաները խիստ սուր ու ամուր ըլլալուն՝ փայտ ալ կը կտրեն . իրենց կերակուրն ալ ծառի կեղեւ ու տերեւ է :

Այս կենդանւոյս պէս ձարտար ու խելք բանեցընող կենդանի չկայ կ'ըսեն : Անանկ բաներ կ'ընեն որ կարծէս թէ մէջերնին խօսք դրեր են որ իրա-

¹ Vincent Chevalier.

² Լուկա Գալլ. Castor. Տ. 2. Վ. 1. Հ. 1.

³ Փառա:



. Պ լուս :

ըու ընկերութիւն ընեն, օգնեն, պաշտպանեն : Հասարակօրէն երկու իրեք հարիւրը մէկտեղ կը բնակին, վեց եօթը ոտնաչափ բարձրութեամբ ջրին երեսը հաւկըթաձե կամ կլոր տնակներ շինելով : Խնան նէ՝ մեծ լիձ մը կ'ընտրեն, ու հոն կը շնեն իրենց տնակները ցիցերու վրայ : Դարսուանց մէյմէկ գմբէթի կը նմանին աս տնակները, ներսուանց մէյմէկ աշտարակի, և հասարակօրէն տասնէն ինչուան երեսունը մէկտեղ կը գըտնուին :

Ուէ որ ջրշունները լիձ չգտնեն իրենց յարմար, պինտ գետին մը կ'ընտրեն՝ որ մէջէն ջուր անցնի, և ան-

տեղը բանի բերելու համար ըրած ճարտարութիւննին, խելք բանեցըննին, յիշողութինին զմարդ կ'ապշեցընէ :

Երբոր այլեւայլ ցեղ կամ ընկերութիւն մէկտեղ ուղեն բնակիլ, առջի հոգերնին ան կ'ըլլայ որ ընտրած տեղերնուն չորս գին թումբ կամ պատշինեն : Եսոր համար կ'երթան բաւական հաստութեամբ փայտեր կը կտրեն ու գետինը ցից կը զարնեն հինգ վեց ոտնաչափ բարձրութեամբ՝ կարգ կարգ, ծառի ծիւղերով ալ իրարու կը հիւսեն . Ետքը անոնց պարապ միջոցները քարով աւազով կաւով կը լեցընեն . և աս իրենց շէնքը այնչափ

Հաստատ է որ մարդ վրան համարձակ կրնայ քալել։ Պատին երկայնութիւնը ինչուան հարիւր ոտնաշափ կ'ըլլայ՝ ծայրէ ծայր վրան շիտակ։ իսկ լայնութիւնը տասը կամ տասուերկու ոտնաշափ կ'ըլլայ տակէն։ քանի կ'երթայ կընեղնայ, ինչուան վրայի երեսը երկու իրեք ոտնաշափ կ'ըլլայ։ Պատին շէնքը լմընցընելէն ետև՝ տներնին շինելու ձեռք կը զարնեն։ ուստի հողքար՝ փայտ կը կրեն, ու անանկ կը շարեն որ հաստատ ըլլայ, դրսէն ալ ծեփ մը կու տան։ Իսպատերուն հաստութիւնը գրեթէ երկու ոտնաշափ կ'ըլլայ։ տնակին յատակն ալ ջրին երեսէն այնափ վեր կը կենայ որ ամենսեին ընկղմելու վտանգ մը չըլլար։ Ծնակները հասարակօրէն մէկ յարկ ունին, բայց երբեմն իրեք յարկովն ալ կը գտնուի, ու մէջերնին ինչուան տասը տասնը հինգ սենեակ։ ամէն մէկ տնակին մէջ տասնէն ինչուան երեսուն ջրշուն կը բնակի։ Ալսեն թէ ամէն ջրշուն իրեն համար զատ խշտի կամ անկողին ունի՝ եղէգէ, տերեւէ և ուրիշ թեթե բաներէ շինած։ և ամէն տնուոր իր ձմեռուան ապրուսաը կը դիզէ ծառի կեղևներէ ու բարակ ձղերէ որ կոկ իրարու վրայ դիզած կ'ըլլան։ Իմէն մէկ տնակը երկու դուռ ունի։ մէկը ցամաքը կ'ելլէ, մէկալը ջրին մէջ՝ այնափ խորունկ որ ինչուան ան տեղը խիստ դժուար կ'ըլլայ որ սառի։

Իրեք չորս տարի նոյն տեղը բնակելէն ետև կ'ելլեն շատ անգամ ջըրշունները առջի տեղին մօտ ուրիշ գեղմըն ալ կը շինեն, անանկ որ դիւրաւ կարենան երթալ գալ առջի տեղերնին։ Ծնակնին շինելէն ետև նոր աշխատանքներու ձեռք կը զարնեն։ ու թէպէտ լիճը բոլոր սառած ըլլայ՝ իրենք աշխատանքէն ետ չեն կենար։ Ա ասն զի սառը կը ծակեն ու անով իրենց մտնելու ելլելու ձամբայ կը բանան։ Իմառը շատ անգամ տներնին տեղերնին կը թողուն՝ ասդիս անդին կը պտղին։ գիշերն ալ թու-

փերու տակ կամ ջրի եղերքը կը քաշուին։ Պահանկ ատեն պահապաններ ունին, որ թշնամի տեսածնուն պէս՝ իմաց ընեն պառկողներուն։ Ձմեռը իրենց բնակութենէն ուրիշ բանի համար չեն ելլեր՝ բայց եթէ ապրուստ բերելու, որ ջրին տակը դիզած պահած են։ ուստի ձմեռը շատ կը գիրնան։

Վ ջըրուններ կը գտնուին որ առանձին չոր գլուխ կը բնակին փոսերու մէջ ջրի մը քով։ աս փոսերուն երկայնութիւնը երբեմն ինչուան հարիւր ոտք կ'ըլլայ։ Արսորդները ասոնց Շգնաւոր ջրշուն կ'ըսեն։

Շամբորդին մէկը գետի մը գլխու քով ջրշուններու շէնք տեսնելով՝ քիչ մը ատեն իր ընկերներովը հոն մօտիկ վրանը՝ կը դնէ՝ այնպէս որ առանց ջրշուններուն երենալու դիտէ տեսնէ անոնց աշխատանքը։ Ուսինը երենալուն պէս ելան, կ'ըսէ, շատ մը ջրշուններ։ ծառի ձիւղեր շալկած եկան շուտ շուտ, և առանց ձայնի առուակ մը կամ ջրանցք մը շինեցին մէկ ոտնաշափ լայնութեամբ, և մէկէն տեղերնին քաշուեցան։ Այբոր ջուրը սկսաւ ան առուակին մէջէն խոխոջալով անցնիլ իմացանք կ'ըսէ՝ որ ջրշուն մը ջուրը մտաւ։ ետքը դուրս ելաւ՝ պոչովը չորս անգամ ուժով զարկաւ գետնին։ Իս նշանով որչափ ջրշուն որ կար ներսը՝ բոլորը մէկէն ջուրը թափեցան ու հասան ինչուան առուակը. կ'երենայ թէ բան մը աւրուեր էր։ Ին ատեն ասոնց մէմէկը կարծէս թէ բաներ ապրուպրեց. վասն զի ետևէն մէկէն՝ ի մէկ բաժնուեցան գնացին ամէնքը ան լի պէս տեղին մէյմէկ ծայրը։ Ոմանք սկսան շաղախի պէս բան մը շինել, ոմանք ալ անիկայ պոչերնուն վրայ դրած սկսան կրել. և որովհետև երկերկու ջրշուն մէկտեղ կ'աշխատէին՝ մէկը զմէկալը կը բեռցընէր։ Այբոր ասոնք աս կաւը կը տանէին՝ հոն սպասող ջրշուն-

ները կ'առնեին անիկայ կը դնեին ա. ոռւակին մէն ու իրենց պոչովը ու. ժով զարնելով կը պնդացընեին : Իսով երբոր ան ջրին խոխոջալը դադրեցաւ, ջրշուններուն մէկը պոչովը երկու ան դամ գետնին զարկաւ . ան ատենը ամէնքը մէկէն հանդարտութեամք ջուրը մտան՝ աներեսոյթ եղան . մենք ալ գնացինք կ'ըսէ հանգչելու :

Ի՞ւաւոտանց կուգան ասոնք ջրշուն ներուն շէնքին մէկ կտորը կ'աւրեն . մէկէն ջրշուն մը կ'ելլէ, կուգայ քովերնին որ տեսնէ թէ ինչ եղեր է . երբոր իրենք զ ջրշունները չփախցրնելու համար մէկդի կը քաշուին , ջրշունին մէկը կուգայ աւրած տեղը կը դնայի կը զննէ . առջի անգամուն պէս չորս անգամ պոչը կը զարնէ . մէկէն դուրս կը թափին մէկալ ջրշուններն ալ : Ի՞նոնցմէ մէկը աշխատելու գնացած ատենը ձամբորդներուն քովէն անցնելով, ասոնք հրացանով կը զարնեն ան խեղչը . ան ձայնէն որչափ որ ջրշուն կար հօն՝ ամէնքն ալ դուրս կ'ելլեն . ասոնք ալ մէկ քանի հրացան պարպեշնուն պէս՝ ջրշունները կը ձգեն անտառները կը փախչին : Ի՞ս ատեն ձամբորդները կ'երթ ան ասոնց տեղուանքը մէկիկ մէկիկ կը զննեն :

Դ ջրշունը երկու մորթ ունի վրայէ վրայ . տակինը բարակ բրդով ու կակուղ կ'ըլլայ, ուսկից կը շինուին դուրպաններ, գլխարկներ և զարդի հագուստներ . վրայինը՝ որ այնչափ յարդի չէ՝ աւելի բրդոտ ու դիմաց կուն է : Դ ջրշունի մորթը մեծ գին կ'ընէ Իմերիկայ ու Խւրոպայի հիւսիսային կողմերը : Ի՞ս կենդանւոյս աշուկներէն քսան տրամի չափ բժշկական հիւթ մը կ'ելլէ, որ տաճկերէն գուստուղ ամպէրէ կ'ըսուի :

Լ ագ ջրշունը յունիսի վերջերը կը ցընինի, և սովորաբար երկու ձագ մէկէն կը բերէ, որ ինչուան իրեք տարի իրենց մօրը քովը կը կենան, ետքը կ'ելլեն իրենց զատ տնակներ կը շինեն, երբեմն ալ ամէնքը մէկ տնուոր կ'ըլլան կը կենան մէկտեղ :

Որսորդները ջրշուն բռնելու համար կ'երթան անոնց տնակներուն ջրի վրայնայող դուռը կը դոցեն, ցամաքի դուռը կը մեծցընեն, ետքը իրենց որսի շունը ներս կը խոթեն . անիկայ կը մտնէ, ջրշունին մէկը ակուաներովը կը խածնէ, որսորդներն ալ շանը ետեի ոտուըներէն կը բռնեն, երկուքը մէկտեղ դուրս կը քաշեն : Հուտսոնի կողմը եղած հնդկաստանցիք՝ առաջ ջրշուններուն բնակարանին ջուրը կը կտրեն, ետքը անոնց տնակներուն վրայ ցանցով կը ծածկեն՝ միայն վրայէն ծակ մը թողով, ուսկից որ ներս կը մտնեն . խեղջ կենդանիներն ալ փախչելու տեղ չգտնելով կը շփոթին ու կը բռնուուին :

Իսուն ջրշունին տեղն է Ի՞սիայի ու Խւրոպայի հիւսիսային կողմերը, բայց Իմերիկայի հիւսիսային տեղուանքը աւելի շատ կը գտնուի : Իսոնց իրարու վրայ ունեցած սէրը այնչափ է որ անգամ մը երկու ջրշուն կան եղեր տեղ մը պահած . ասոնց մէկը դիպուածով մը կը սատկի . ան ատեն մէկալ ընկերը այնչափ կը տրտմի որ ցաւէն բան չուտելով ինքն ալ կը սատկի : Դ ջրունը կ'ընտանենայ կ'ըսեն . բայց թէ որ մէկը քովը մօտենայ, առջի բերան նոր ծնած տղու պէս ձուալու ձայն մը կը հանէ : Որչափ որ կերակուր տրուի իրենց, ջրին մէջ կը թրցենու ետքը կ'ուտեն . բնութմբ մաքրասէր ըլլալով շատ անգամ ոտուընին կը լուան, և ակուանին կը մաքրեն :

ՀԱՆՔԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Փլանէն :

ՓԼԱԹԻՆԱ բաց մոխրագոյն մետաղ մըն է, որ յղկած պողպատի

¹ Փլանէն անունը սպանիացւոց լեզուովն է, որ ըսել է արծաթ . վասն զի ձերմակագոյն ու արծաթի նախն է : Տաճկերէն կը սեն Պէտուալ ունեն . իսկ մըր լեզուով 1. հոռին բառը յարմարցուցած է :